ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 45.11-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏՈՒՄ ՆՇՎԱԾ ԱՆՁԱՆՑ՝ 2026Թ. ՄԱՅԻՍԻ 14-Ի ԵՎ 15-Ի ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ (ԳՐԱՎՈՐ) ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) որակավորման հանձնաժողովը (**այսուհետ՝ Հանձնաժողով**), մասնակցությամբ՝ Հանձնաժողովի նախագահ Հունան Տեր-Վարդանյանի, անդամներ՝ Արա Զոհրաբյանի, Արսեն Համբարձումյանի, Մարգարիտա Զալիբեկյանի, Կարեն Մեժլումյանի, Միսակ Մարկոսյանի և Գառնիկ Թուխտարյանի

հաշվի առնելով ՀՀ փաստաբանական ակադեմիայի ունկնդիրների որակավորման քննությունների գրավոր փուլի ամփոփման անհրաժեշտությունը,

նկատի ունենալով առարկայական քննական հանձնախմբերի անդամների կողմից որակավորման քննության գրավոր առաջադրանքները ստուգելու հանգամանքը,

ուսումնասիրելով աշխատանքները և հանձնախմբի անդամների կողմից ունկնդիրների չբացահայտված աշխատանքների գնահատականները,

հիմք ընդունելով Հանձնաժողովի անդամների կողմից կատարված գնահատականները՝ ըստ ծածկագրերի,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ և 45.11-րդ հոդվածների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման կարգի 98-րդ կետի պահանջներով,

ՈՐՈՇԵՑ՝

1. Ամփոփել ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածության ունկնդիրների 2026թ. մայիսի 21-ին տեղի ունեցած որակավորման քննությունների առաջին փուլի արդյունքները՝ գնահատելով իրավական խնդիրներ և հայցադիմում կազմելու վերաբերյալ գրավոր աշխատանքները՝ համաձայն հավելված 1-ի:

2. Ամփոփել ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած քրեաիրավական ուղղվածության ունկնդիրների 2026թ. մայիսի 22-ին տեղի

Որոշում N 3/1-Ա
10 հունիսի 2026թ

ունեցած որակավորման քննությունների առաջին փուլի արդյունքները՝ գնահատելով իրավական խնդիրներ և դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելու վերաբերյալ գրավոր աշխատանքները՝ համաձայն հավելված 2-ի:

3. Տեղադրել սույն որոշման հավելվածները Պալատի կայքում և փակցնել՝ Պալատի 4-րդ հարկում գտնվող ցուցատախտակի վրա:

4. 2026թ. հունիսի 10-ին ժամը 17^{30}-ին ք.Երևան, Զաքյան 7-2 հասցեում գտնվող Պալատի շենքի 4-րդ հարկի մեծ դահլիճում բացել կնքված արկղերը և հանել ծածկագրերի թերթիկները:

5. Սահմանել, որ կնքված արկղերը կբացվեն Հանձնաժողովի նախագահի կամ Հանձնաժողովի այլ անդամի կողմից:

ՀՀ փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի նախագահ՝
Հունան Տեր-Վարդանյան

Որոշում N 3/1-Ա
ք. Երևան
10 հունիսի 2026թ.